



2. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍԻ ԵՎ ՇԱՄՏԱՆԻ ԽԵՔՅԱԹԸ

Ժամանակով կար մեկ մարդ, մեկ կնիկ, ուներ մե հատ քուր, ուներ մե էրեխա տղա: Էտ մարդը ուրա քվորը շատ կըսիրեր ուրա կնկնից: Մե առ ժամանակ էտենց կառավարվան, կնիկը մարթի խետ ռիսվավ, թե էս ի՞նչխ պան ա, հիրիկուն դյուքնից կուգա՝ ընձի խետ ըսկի չասա, չի խոսա, սերը տվե ուրա քվոր: Գիշերը հելավ ուրա տղեն մորթեց, արնոտ դանակ տարավ, դրեց ուրա քվոր ջեպ՝ միամիտ: Առավոտ հելավ օրորոց բացեց, տեսավ՝ տղեն մորթուկ ա, ձեռ թալեց մարթու յախեն, քվոր, պինդ կայնավ, թե իմ էրեխեն դու եք մորթե: Ինչքան աղերսեցին, չելավ, ուրա լաչիկներ ճղեց, թե կէթամ դիվանին գանգատ: Որ շատ լավա ընկան, ասավ. «Բռնեք ձեր ջեպեր իշկամ, տենամ, մկա էս իմ էրեխեն մորթողի դանակ արնոտ կընի»: մարթի չորերն իշկաց՝ զատ չըգտավ, գնաց մարթի քվոր չորեր իշկաց, դանակ քվոր ջեպեն խանեց:

Մարթին ասավ, թե քու քվոր սեր ու քոն էսքա՞ն էր, որ իմ տղեն մորթեց, ես կէթամ թագավորին գանգատ կանեմ: Մարթ շատ լավա ընկավ, ընկավ կնկա ձեռ ու ոտ:

Ասավ. — Չունքի որ ըտենց ա, քու քվոր տար փչացո՛ւ, պարաթեն բեր տո՛ւ ընձի, որ իմ սիրտ խովնա:

Հելավ էտ մարթը, վերուց ուր քվոր գնաց, մե ամսվա խաց քվոր պատրաստեց, էտ քաղաքին մե առանձին մեշա կար ամալի, տարավ էտ մեշեն, մե ախալրի վրա իջան:

— Է՛ քուր, — ասավ, — ես ի՞նչ անեմ, թե քե կըսպանեմ, քեզ մեղք չըկա. իմ տղին իմ կնիկն ա մորթե, եթե քեզի չեմ մորթե, առանցի պարաթա կէթամ, էստեղ կնկա ձեռեն չեմ պրծնե:

Ասավ. «Դու գինաս, ախալե՛ր, ինչ գինաս, արա՛»: Բռնեց քվոր էս չոքերից կտրեց ոներ, խացը թողեց էտ քվոր կուշտ, քուրը թողեց էտ ամալի մեշի մեջ, ոներ տարավ, գնաց տվեց կնկան: Ընտոնք թող մնան դատ, մենք դառնանք ախչրկա վրեն:

Մեկ ուրիշ թագավորի տղա, ուրան հընկերներով կուգեր էտ մեշեն ավղուշ, կուգին կըկայնին յոթ ճամխի բաժին, փոչք կըքցին, ամեք ուր փչքի քամակ կէթեր ավղուշ: Էտօր թագավորի տղի փուշքը հընկավ էտ մեշի յանը, թագավորի տղեն գնաց էտ մեշի մեջ, պատահավ էտ ախշըկան, թաղմընեց, տեսավ էնքան մե սիֆաթով ախշիկ ա, որ գնաց մոտեցավ էտ ախշկան:

—Ախշի՛, խաշյ ես, թո՞ւրք ես, ի՞նչ մարդ ես:

Ախշիկը թագավորի տղին պատասխանեց, ասավ. —Ես մեկ հայ ախշիկ եմ:

—Ապա ընչի՞ ես նստե դատ, չե՞ս վախենա էս մեշից:

—Ձէ՛, պախող Աստված կըպախա:

Ձին քչեց, ախշկան մոտեցավ, ասավ. —Արի քեզ տանեմ ընձի համար:

Ախշըկան ասավ՝ հելի՛, չըկարցավ հելեր:

—Ախշի՛, ինչի՞ չես իգա, ինծի խավանութին չե՞ս իտա:

—Ձէ՛, թագավորի՛ տղա, չըմ կանա, հըլնի կայնե:

Թագավորի տղեն ձիուց իջավ, գնաց թեխ էն, պանցրացուց, տեսավ՝ չոքեր կտրուկ ա:

—Հեյ վախ, —ասավ. —խողի չըտենի, ի՞նչ անեմ. չըտանեմ, մնա էստե՝ կըփճանա, տանեմ՝ ոններն ա կտրըված:

Միտք արավ, ասավ, տանեմ, իմ կսմաթն էս ա, էս ա պատահե ընձի: Թագավորի տղեն վերուց ախշըկան, առավ, գնաց:

Տեսավ, որ հընկերներ բոլոր գումար էկած ա ճամփու վրեն:

—Թագավորի՛ տղա, ինչի՞ ետցար:

Թագավորի տղեն ասավ, թե՛ խոսալ հարկավոր չի, քչե՛ք:

Քչին գացին:

Տարավ թագավորի կուշտ. թագավոր որ տեսավ. —Բան չըկա, որթի՛, ոգի ես ազատե, բերե, բան չըկա: Տանենք քցինք մեր խեյրյաթխանեն, թո ապրի:

Թագավորի տղեն ասավ. —Թագավո՛ր, ի՛նչ կասես, իմուն կա, էս ա, չըկա, էս ա:

Թագավոր ինչքան տղին խրատեց, չելավ, վազիրներ ինչքան խրատին, չելավ, վաքիներ ինչքան ասեցին՝ չելավ, բերին պսակին վըր թագավորի տղին: Մեկ առ ժամանակ մնաց, թագավորի հաչողութեն էկավ, ամեն մեկ կողմով: Թագավոր էս խետ հուշ դառձուց խարսի վրա: Հելավ, որ թագավորի վրեն կոխվ բացվավ, թագավորի տղեն կոշուն վերուց, գնաց կոխվ: Թագավորի տղեն որ գնաց կոխվ, թագավորի խարս պառկավ մե ջուխտ տղա բերեց, մեկի անուն դրին Պողոս, մեկին դրին Պետրոս:

Թագավոր աշկալուսենք գրեց, տվեց թաթարին, ասավ.—Տար խասո՛ւ տղին:

Թաթար նամակ դրեց փափախ ու յալա գնաց, գնաց էտ ախչկա ախպոր քաղքով պըտի ընցընի: Էտ ախչըկա ախպերն էլ գնացե կոիվ. գնացած էնտեղ թագավորի տղի խետ ախպերացած ա, չաղըներ մե տեղ զանած ա, ուրանց թշնամու խետ կըկովին:

Թաթարն գնաց էտ լիբը կնկա բալկոնի տակը նստավ, դինջըցավ, մե քիչ խաց կերավ, ինք ուրին ասավ, մի քիչ քնեմ դինջընամ, էթամ: Էն լիբը կնիկ նստեր էր փանջարեն, թամաշա կաներ, որ թաթար քնավ, կնիկն իջավ, էկավ թըթըրի կուշտ, փափախն իշկաց, տեսավ, որ թուխտ՝մ մընչ փափխին ա:

Թուխտը կարդաց, տեսավ, որ աշկալուսենք ա գրված, էտ թուխտը վերուց, մե ուրիշ թուխտ դրեց. «Աչքդ լուս չըլի, ո՛չ դու ըլիս, ո՛չ քո կնիկ, քու կնիկ պառկե, մե ջուխտ շան թուլա յա բերե»: Դրեց թըթըրի փափախ: Թըթըրն էլավ, միամիտ գնաց, տարավ տվեց թագավորի տղին, թագավորի տղեն առավ, իշկաց, ասավ. «Ընձի կապուլ ա. շան թուլա կըլի, ինչ կըլի, իմ կնիկ կըպախես, չուր իմ ետ դառնալը»: Թաթարը վերուց էկավ: Էկավ էտ քյոփօղլի թաթարը, էկավ, էլման էտտեղ պառկավ քնավ: Կնիկը, որ տեսավ, իջավ, էկավ թուխտ խանեց, կարդաց, փոխարկեց. «Էս իմ թուխտ խասնելու պես չես թողե էթերանք մնա, կրփճացնես, կաքսորես կէթա»: Թըթըր թուխտ բերեց, խասուց թագավորին:

Թագավոր, որ առավ թուխտ, տեսավ, շատ մըռմըռաց. «Ի՞նչ անեմ,—ասավ,—տղա յա գրե, էլի»: Ուստա բերեց մե կյամի տվեց շինել, բավականի խաց պատրաստեց, դրեց կյամու մեջ, քցեց ծովի հրես ու ուրան, էրեխեքին էլ տվեց ուրին. «Գնա՛, —ասավ,—Աստված քու պան Հաջողա՛»:

Էտ կյամին ծովի հրես գնաց, շատ ու քիչ Աստված գինա, գնաց մե կրաղից դուս էլավ: Ծովը որ աշուն ժամանակով ցածրցավ, կյամին իջավ գետին, էտ տղերք էլած ին կյամուց դուս, ուրանց խամար կըխաղին, Հելան մե տաս տարեկան տղա, էս խետ չանգալ ին շինած, կէթին ձուկ կըբռնին, բերին կուտին, կապրին: Էն մի օր գնացին տեսան, որ ծովի Հերես մե փոստ կուգա. Պողոսն ասավ. «Պետրոս, էն փոստը թո գա էլի կրաղ, տանենք թալինք մեր մոր չոքերի տակ՝ թո նստի, կակուղ ըլի, չըցավա»: Փոստն էկավ էլավ կրաղ, էտ փոստը վերցին, Պողոս բռնեց, Պետրոս թախթըփեց, բացվավ մե սուֆրա, աշխարքի տակ ինչքան խորակներ ասես մեջ կըգտնվեր, տվին ուրանց մերն առավ պախեց, օրական էտոնց ապրած ըտով էր:

էն մե օր մեկ դարվեչ էկավ ըտոնց դոնախ. էկավ, ասավ.—
Քո՛ւր,—ասավ,—Պողոս տու տանեմ մե գործի:

Ինչքան լավա ընկավ, չըտվեց:

—էս սարի կողն,—ասավ,—խազինա կա, քու Աստծու սերն ըլ-
նի: Աստծու սեր որ տվեց, կնիկն Պողոսին տվեց, դարվեչ տարավ:

Գացին մե քարափի դեմ կայնան:

Դարվեչն ասավ.—Պողո՛ս, ինչքան խրատ կըտամ էլ էսա չըմ
խոսա խը քեզի:

Ըսկըսեց Պողոսին խրատ տալ.—Ես,—ասավ,—իմ թուխտ կը-
կարդամ, էս քարափից մե դուռ կըբացվի, դու կէթաս ներս, ես
կըմնամ դուս, ինչ մարդ որ կուգա՝ քեզի լավա կինի, ձեն չըխանես,
խըտ ընձի չըխոսաս:

Դարվեչն ըսկըսեց թուխտ կարդալ, դուռը բացվավ, Պողոս
գնաց ներս, դարվեչ կայնավ շեմի վրա. Պողոս տեսավ, որ մեկ
խարս էկավ, շորեր կըխանա, կըքցա ու կուգա: Աստու սուր կուտա
ու կըգա, դարձավ Պողոսին շատ աղերսեց, Պողոսն էլ ձեն չարավ,
խարսն կուրիսավ:

Մե քիչ տեղ էլ գնաց, քիչ ա մացե խասնի խազնին, մե շամ-
դան կա վըր խազնին, դարվեչ Պողոսին ասավ.—Պողո՛ս, մինակ էն
շամդան ընձի, ինչքան խազնա կա քեզի:

Պողոս տեսավ, որ էն դեխեն մե ախչիկ էկավ, շորեր կըխանա,
թըփա ու կուգա, էկավ, սկսեց Պողոսին լավա իյնել:

Պողոսն դարձավ դարվեչին ասավ.—Դարվե՛չ, քու տուն ավի-
րի, էս շապիկ թումպան էլ թո մնա վրին:

Դուռ փակվավ, Պողոս մնաց ներս, դարվեչ փախավ: Պողոս
մնաց չիվար, էսդեխ զարկըվավ, էնդեխ զարկըվավ, էլ դուռ չըկա.
գնաց խազնի կուշտ. «Տո ջանըմ,—ասավ,—էն քյոփօղլի, դար-
վեչ մե շամդանի խամար ընձի բերեց քցեց էստե», շամդան վե-
րուց դրեց ուր ծոց: Շատ պըտտավ էտ հէրի մեջ, տեսավ, որ վերի
յան մե կըռթկըռթոց կուգա. գնաց, տեսավ, որ մե աղվես, աղվը-
սուն լարեց, աղվես փախավ մե ծակից հելավ դուս: Պողոսն էլ շատ
տանջըվավ, դես-դեն, էտ ծակից հելավ դուս: Գնաց մե հավլաչու
էլավ նոքար, մեկառժամանակ մնաց էտ հավլաչու կուշտ, հավլա-
չին Պողոսին շատ ընթունեց, գնաց ուրա կնկա խետ մասլահաթ
արավ հավլաչին. «Կնի՛կ,—ասավ,—մեր նոքար շատ բարեհաջող
տղա յա, բե մե ախչիկ տանք էս տղին»: Բերին ախճիկ տվեցին Պո-
ղոսին, հիրիկուն էտ հավլաչուն կանչեցին հուրիչ տեղ կոնաղլըխ,
ասավ. «Պողո՛ս, ես կէթեմ, կուրպա՛ն, դու ժամանակին դուռը
կըփակես, կէթաս տուն»:

—Շա՛տ լավ, աղա՛:

Աղեն գնաց կոնաղլըխ, Պողոս՝ հայ էս մուշտարին էլ ճամփի դնեմ, հայ էն մուշտարին էլ ճամփու դնեմ, գնաց էլավ չուր սը-հաթի տասներկուս, դուռը փակեց, հելավ գնաց, տունը շըչկըռավ, հընկավ քաղաքի մեջ, գնաց թագավորի ախչկա մե խաս բախչա կար, էն խաս բախչի մեջ նստավ: Խաց էր պատրաստե, որ տաներ տուն. որ չըկարցավ տունը գտներ, խացը մնաց ուրա կուշտ. «Տո ջանըմ,—ասավ,—սոված եմ, մը քիչ խաց ուտեմ»: Մու տեղ խաց բացեց. «Ջա՛նըմ,—ասավ,—էս չոլի մեջ տեղ խաց ուտել լավ չէ, մեկ կըպատահի ընձի կըթալնա»: Էտ բաղի մեջ օթաղներ կար, գնաց էտ օթաղների մեջ: Նագաստան էտ շամդան հընկավ մտնե, բերեց մոմ վառեց, զանեց շամդանի վրա, տեսավ, որ քառսուն տե-ղով շամդան վառավ, ջուխտ կուլը չոքան դեմ:

—Պողո՛ս, ավիրե՞նք, թե՞ չինենք:

Ասավ.—Ո՛չ ավիրեք, ո՛չ չինեք:

Կուլեր գնացին, քառսուն խատ ախչիկ դուֆը ձեռներ, էկան ըսկըսին խաղալ ու դուֆ զարնել, հետո էկան մեկ-մեկ ոսկի դրին Պողոսի չոքի վրեն, գլխ տվին ընցան:

Թագավորի ախչիկը տեսավ, Պողոսը որ պրծավ, խաց կերավ, շամդանը դրեց գլխի տակ, քնավ: Թագավորի ախչկան մե թոփալ ջառիա կար, ասավ. «Թագավորի՛ ախչիկ, ի՞նչ կըտաս, էթամ էն շամդան բերեմ քեզի»:

—Քո կշռանով ոսկի կըտամ:

Թոփալ ջառիեն գնաց Պողոսի գլխի տկեն շամդանը գողցավ, առավ էկավ: Բերեց, պախեցին մենչ իրիկուն: Պողոսն էլավ տե-սավ, որ շամդան չըկա, տարած ա, էկավ ուր դուքանի դուռ բացեց, կայնավ ծախս կանի: Հիրիկուն թագավորի ախչիկ ջառիեն օղոր-կեց, գնացին երանալի ախչիկներին, չինովնիկների ախչիկներին, կուպըռնատի ախչիկներին համեցեք արին, բերեցին կոնախ, խըտ ուրանց դըզվան քառասուն ախչիկ, բերին շամդան կպցրին, ջուխտ կուլ չոքան դեմ:

—Հա՛, թագավորի՛ ախչիկ, ավրե՞նք, թե՞ չինենք:

—Ավիրել ի՛չ բան ա, կուզեմ չինութեն, քեֆ, ուրախութեն:

Կուլեր գացին տեսան, օր քառսուն խատ արանց էկան, դուֆ ձեռներ, զանին, խաղցին, չուրի գնաց սըհաթի տասներկուս ըն-ցավ: Դուֆեր դրին գետին, ամեն մեկն առան պառկան. թագավորի ախչկան էմալ մե գոռպե՛մ պատահավ ո՛ր: Հելան էտ մարդիկ գնա-ցին: Չինովնիկների ախչիկներ, երանալի ախչիկներ, էլան թագա-վորի ախչկա յախեն բռնեցին, թո էս ի՞նչ պեռըզութեն արեցիր:

—Ձեր տուն ավերի,—ասավ,—ես ի՞նչ մեղավոր իմ էստեղ, ես ձեզնից խապար չելա, ինձի մե գոռպեն պատահավ, իմ մուխ մոլ-րաց է:

Գնացին ուրանց խերերին ասեցին, խերերն էկան թագավորի կուշտ՝ գանգատ:

Թագավորն ասավ.—Իմ ախչկան մեղք չըկա: Մեղքը շամդանին ա, շամդան տվե՛ք թալալի ձեռ, թո քաղաքի մեջ պոռա, պըտըտա, էտ շամդանի տեր մըջ քաղաքին կըլի, ուր շամդան կըրոնա:

Շամդան տվին թալալին, կանչելով էկավ, Պողոսի դռնքնի դռնով կընցներ: Պողոսն էլավ ուր շամդան բռնեց, Պողոսին էլ խըտ շամդընին տարան թագավորի կուշտ:

Թագավորի խարցուց ասավ.—Ա՛յ տղա, քու շամդանի խուսարն ի՞նչ ա, մեզի ցույց տա՞ս:

Ասավ.—Թագավո՛ր, իմ շամդանը հիրիկուն կըվառի, մկա չի վառի:

Մնաց հիրիկուն, էտ ախչիկներու խերեր ինչ որ կար՝ թագավոր կանչեց բերեց:

—Դե,—ասավ,—քու շամդան վառա՛:

Շամդան վառեց, քառասուն փարին էկան, ըսկսեցին խաղալ, որ ժամանակներ թըմըմավ, ամենին գլոխ իջեցրին, էկան Պողոսին չոքի վրեն մեկ մեկ ոսկի դրին, հընցան:

Թագավորն ասավ.—Բռնե՛ք,—ասավ,—էտ ախչիկները:

Գնացին կնիկ բերեցին, էտ օղլուշաղներուն սմատրա արին, տեսան, որ բոլորն էլ ախչիկ են, էկան թագավորին ասին՝ ախչիկ են:

Թագավորն էն մարդերուն պատասխանեց, թե ձեր ախչիկներն ապականված են, էկած ին, շառ քցած իմ ախչկա վրեն, իմ ախչկան մեղք չըկա:

Թագավոր բերեց ախչիկ տվեց Պողոսին: Պողոսի խեր թագավորի տղեն էկավ տեսավ, որ ուր կնիկ չըկա, կուրիսեր ա: Հելավ ձին հեծավ, ընկավ կնկան պըտտելու: էկավ ծովի կղզին, կնիկ գտավ, ասավ. «Ընձի էրկու տղա կար, մեկն ո՞ւր ա»:

Կնիկն ասավ, թե Պողոս կուրիսեր ա, չըկա:

Կյամին թողեց էտտեղ, կնկան ու Պետրոսին վերուց, պըտըտելով գնաց էտ քաղաք, Պողոսին էլ գտավ, մե վախտ մնաց էտ քաղաք Պողոսի կուշտ. թագավորից իրավունք առան. թագավոր բերեց պատրաստութեն տեսավ, Պողոսին, ուր ախչկան էն մարթիքի խետ ճամփու դրեց, էկան դեպա ուրանց խերեր:

էկան խասան ուրանց խոր քաղաք, նորից հարսանիք արեցին, յոթն օր, յոթ գիշեր, ընդունք խասանն ուրանց մուրազին, մենք էլ խասաննք մեր մուրազին:

Երկնքից իրեք խնձոր իջավ, մեկն՝ ասողին, մեկ՝ գրողին, մեկն էլ՝ լսողին: